

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է նախարարությունում քաղաքացիական ծառայության հետևյալ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

## ***Գյուղատնտեսական ծրագրերի մոնիթորինգի և վերլուծության վարչության վերլուծության բաժնի պետ (30-2.2-132)***

### ***Բաժնի պետը՝***

- ապահովում է Նախարարության ծրագրային բյուջետավորման գործընթացի և տարեկան միջոցառումների ծրագրի և այլ ռազմավարական նշանակության միջոցառումների և (կամ) ծրագրերի մաս կազմող՝ գյուղատնտեսության բնագավառին վերաբերող հատվածի մշակումը և ամփոփումը.

- կազմակերպում է գյուղատնտեսության բնագավառի իրավական ակտերի վերլուծությունների և դրա արդյունքում առաջարկությունների նախաձեռնման գործընթացը, գյուղատնտեսության ոլորտի ծրագրերի իրականացման ընթացիկ և արդյունքային ցուցանիշների հավաքագրման, ամփոփման, մշակման, վերլուծության և գնահատման աշխատանքները, գյուղատնտեսության բնագավառում իրավակիրառական պրակտիկայի վերլուծության աշխատանքները, ինչպես նաև գյուղատնտեսության բնագավառի ոլորտի ծրագրերի մոնիթորինգի և գնահատման համար համապատասխան վարչական վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) ներդրման և դրանց միջոցով հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա վարչական վիճակագրական ռեգիստրների վարման համակարգումը.

- վերլուծությունների արդյունքում ձևավորում է առաջարկություններ՝ ուսումնասիրություն կամ վերահսկողություն իրականացնելու համար, և ներկայացնում Վարչության պետին.

- կատարում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ գյուղատնտեսության ոլորտի քաղաքականության և ծրագրերի մշակման, իրականացման, վերլուծության, մոնիթորինգի և գնահատման հետ կապված այլ գործառնություններ.

- Վարչության պետի հանձնարարությամբ ապահովում է Բաժնի առջև դրված գործառնություններից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, այլ փաստաթղթեր նախապատրաստելը, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցներ մշակելը.

- իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

### ***Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝***

- բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ, կամ առնվազն երեք տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային

ստաժ, կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում.

- ՀՀ Սահմանադրության, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Պետական կառավարչական հիմնարկների մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին», «Անասնաբուժության մասին», «Սերմե-րի մասին», «Բուսասանիտարիայի մասին», «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

- Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության բնագավառին վերաբերող անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.

- ռուսերեն (ազատ) և անգլերեն (կարդում և կարողանում է բացատրվել) լեզուների տիրապետում.

- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

### ***Աշխատավարձի չափը՝ 256,623 (երկու հարյուր հիսունվեց հազար վեց հարյուր քսաներեք) ՀՀ դրամ***

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի /ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, հեռ. 011-52-58-57/:

***Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու ժամկետը սահմանվում է մինչև նշված թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:***

#### ***Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝***

- գրավոր դիմում,
- անձնագրի պատճենը,
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),
  - աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում).
  - արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
  - մեկ լուսանկար 3x4 սմ չափսի:

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:30-ից մինչև 12:30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

***Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 22.08.2018թ.***